պատմութեան մէջ որոշելու համար անհրաժեշտ է վերյիշել այն պատմական ժամանակաշրջանը, երբ հրապարակ եկաւ բանաստեղծը:

Ութսունական թուականների կէսերն էին: Ռուսաստանում ծայր էր տուել յեղաշրջութիւնը: Ալեքսանդր Գ-ի գահակալութեան հետ էր սերտօրէն կապուած այն: Անգամ այն չափաւոր-ազատական ծրագիրները, որոնց իրականացման հետ որոշ յոյսեր էին սնուցել ռուս մտաւորականութեան շրջանակները, յոգս էին ցնդել արդէն: Դրութեան տէրը Պօբեդոնոսցեւն էր, «Ռուսաստանի չար ոգին»: Շղթաների տակ էր առնուել ազատ միտքը — մամուլ, գրականութիւն, հանրային կեանք: Քաղաքական-հասարակական կեանքը դատապարտուած էր ամլութեան: Բացարձակ միահեծանութիւնը իշխում էր սանձարձակօրէն: Ազատասէր ոգիները շարէ շար Սիբիր էին քշւում: Գրականութիւնը եւս, որպէս հայելին կեանքի, զերծ չմնաց հարուածներից: Հասարակական-քաղաքական տրամադրութիւններ արտայայտող գրուածքները գրաքննիչի սուր մկրատի բաժին էին դառնում: Եւ, ինչպէս միշտ նման պարագաներում, քաղաքական յեղաշրջութեան հետ զուգահեռ առաջ եկաւ ու դիրքեր գրաւեց հասարակական յեղաշրջութիւնը: Վհատութիւնը եւ յոռետեսութիւնը բուն դրին շատերի սրտում:

Այդ ամէնը արտայայտութիւն գտաւ գրականութեան մէջ: Մի կողմից արտաքին պայմանները, իշխանութեան եւ գրաքննչութեան հարկադրանքը, միւս կողմից էլ հոգեկան բեկումը, մտքերի մէջ առաջ եկած վհատ, յոռետես տրամադրութիւնները պատճառ դարձան, որ գրականութիւնը մի զգալի չափով երես դարձնէ հասարակական հարցերից եւ անհատի ներքին աշխարհի մէջ ամփոփուի, անհատը իր բոլոր յոյսերով ու յուսախաբութիւններով, իր բոլոր յոյզերով եւ ցնցումներով դառնայ նիւթ գրականութեան ընդհանրապէս եւ բանաստեղծութեան՝ մասնաւորապէս:

Այդպէս էլ եղաւ 80-ական թուականներին, ռուս իրականութեան մէջ: Այդ ժամանակաշրջանի ծնունդն էր երիտասարդ բանաստեղծ Նադսոնը, զուտ քնարերգակ: Անհատական սէր ու վիշտ, մանաւանդ վիշտ,— ահա նրա երգածը: Այդ յոռետեսութեան աղբիւրը սակայն ոչ միայն հանրային էր, այլ եւ անհատական, բանաստեղծի անյոյս վիճակը, որ եւ նրան վաղաժամ գերեզման իջեցրեց: Ինչպէս մեր Դուրեանի եւ Տէրեանի պարագան է:

Արեւելահայ կեանքը մի մասնիկն էր համառուս կեանքի, բնականաբար չէր էլ կարող զերծ մնալ նրա ազդեցութիւններից: Եւ, ինչ որ հասարականօրէն եւ գրականօրէն ասուեցաւ ռուս իրականութեան մասին, նոյնը — էլ աւելի թանձրացեալ ձեւով — վերաբերում է ժամանակի արեւելահայ իրականութեան: Հայ-ազգային կեանքը շնչահեղձ օրեր էր ապրում ուղղակի: Ալեքսանդր Գ-ի բէժիմը որպէս արիւնազանգ թաթ իջած էր պահւում հայ ժողովուրդի գլխին: Նրա ամբողջ ծանրութիւնը հասկանալու համար բաւական է յիշել, որ նոյն այդ սեւ օրերին տեղի ունեցաւ մեր դպրոցների առաջին փակումը: Ռուս ժանտարմները գոցել էին հայկական հարիւրաւոր վարժարաններ: Բազմաթիւ ուսուցիչներ եւ տասնեակ հազարաւոր մանուկներ փողոց էին շպրտուել: Ամլութեան էին դատապարտուել հանրային հիմնարկութիւնները: Անգամ եկեղեցին մատնուել էր մեծամեծ կաշկանդումների: Մամուլի լեզուն փականքի տակ էր առնուել: Գրականութիւնը շնչել չէր կարող ազատօրէն: Կարճ, ամէն օր ծանր հարուածներ էր իջեցնում բռնակալ իշխանութիւնը հայութեան գլխին:

Եթէ ռուս մեծ ժողովուրդը ահաբեկուած էր, հասկանալի է արդէն, թէ ինչ աստիճան մեծ էր կառավարական տեռորը փոքր ազգերի, մասնաւորապէս հայութեան համար: Ռուսացման քաղաքականութիւնը իր հերթին էր զոհեր պահանջում ներելի եւ աններելի միջոցներով: Չէին կանգ առնում անգամ բռնի կրօնափոխութիւնների առջեւ: Ռուս ոստիկանութիւնը, ռուս կղերը, ռուս ազախինը, անգամ ռուս ուսուցիչը մի-մի ազդակ էին նոյն այդ ռուսացման գործում: Ու դրան փոքր չափով չէր նպաստում ինքը հայ բուրժուազիան՝ կտրրուած, խորթացած մայր երկրից ու ժողովուրդից, անձնական բարօրութիւն ստեղծած՝ Բաքու եւ Թիֆլիս, Մոսկուա, եւ Պետրոսի քաղաքում: Սահման չէին ճանաչում յեղաշրջական